


ԱՐՎԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2018թ. նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ Արմատատի արհեստակցական կազմակերպության (արհմիություն) խորհրդի ընդլայնված նիստը, որի ընթացքում.

- զեկուցվեց մայիս- օգոստոս ամիսներին կատարած աշխատանքների մասին,
- քննարկվեց և հաստատվեց արհմիության տարբերանշանը (լոգո),
- ընտրվեց երիտասարդական խորհրդի նախագահ և տեղակալ,
- քննարկվեց ԲՀԿ պատգամավոր Գ. Պետրոսյանի ներկայացրած «Արհմիությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը:



2018թ. դեկտեմբերի 15-ին մեկնարկեց Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության սեղանի թենիսի մրցաշարը՝ Երևանի անդամ կազմակերպությունների միջև:



Արմատառի թիմի անդամներն էին.

- Աիդա Մարտիրոսյանը,
- Մովսես Չապանյանը,
- Գայանե Հարությունյանը,
- Արսեն Օհանջանովը



Ամանորի նախաշեմին՝ 2018թ. դեկտեմբերի 21-ին, Արմատատի արհմիությունը բարեգործական այց կազմակերպեց ք. Էջմիածնում բնակվող մի անապահով ընտանիքի:



Արմատատի ֆեյսբուքյան էջում նախապես հայտարարված տեղեկությանն անմիջապես հետևեց աշխատակիցների կողմից դրամական օգնության, սննդի, հագուստի և կոշիկների, գրենական պիտույքների, կենցաղային իրերի ու այլ պարագաների հավաքագրում:

